ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

29 մայիսի 2023 թվական N ԱԿ 499 - Ա

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի օգոստոսի 02-ի N 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի փորձագետների կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN SLAVIK 3807890467 Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հավելված

ԾՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին (այսուհետ՝ Տեսչական մարմին) վերջին ժամանակաշրջանում վերապահվեց օրենքով սահմանված մի շարք լիազորություններ, որոնք վերաբերում էին աշխատանքային օրենսդրության նկատմամբ ամբողջական վերահսկողությանը, աշխարհում տարածվող կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով վերահսկողությանը՝ ստուգայցեր իրականացնելու միջոցով, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման բոլոր ձևերի նկատմամբ վերահսկողությանը: Նշված գործառույթների իրականացման ընթացքում Տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնում կտրուկ ավելացել է իրականացվող աշխատանքների ծավալը: Փորձագետ ներգրավելու հիմքը աշխատողների առողջության և անվտանգության հարցերով ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության հետ կապված Տեսչական մարմնին ներկայացվող դիմումների և հաղորդումների քանակական ավելացումն է, որի արդյունքում ավելացել են հարուցվող վարչական վարույթների քանակը (4-րդ դեպք):

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Փորձագետ ներգրավելու ժամկետն է՝ մեկ տարի:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքների ակնկալվող արդյունքը նշված գործառույթների ժամանակին և ըստ ամենայնի կատարումն է

- իրականացնում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում օրենքով սահմանված պետական վերահսկողական աշխատանքներ,
- իրականացնում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի (այդ թվում՝ տեխնիկական կանոնակարգերի) պահանջների խախտման դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով անհրաժեշտ նյութերի նախապատրաստման աշխատանքներ,
- իրականացնում է մասնագիտական հիվանդության (կամ թունավորման) վերջնական ախտորոշման նպատակով, ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման հավելված 4-ով հաստատված կարգի համաձայն, աշխատողի աշխատանքի

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA
0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

պայմանների հիգիենիկ բնութագրի, ինչպես նաև տվյալ մասնագիտական հիվանդության (թունավորման) զարգացման վրա արտադրական միջավայրի հնարավոր ազդեցության մասին եզրակացության տրամադրման աշխատանքներ,

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում վարչական վարույթների հարուցման, ստուգումների և ուսումնասիրությունների աշխատանքներ,
- իրականացնում է գործատուներին, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին աշխատողների անվտանգության ապահովմանը և առողջության պահպանմանը, աշխատանքային հարաբերություններին առնչվող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության և (կամ) խորհրդատվության տրամադրման աշխատանքներ,
- իրականացնում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքներ,
- իրականացնում է տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման աշխատանքներ,
- իրականացնում է Տեսչական մարմնի տարածքային կենտրոնների աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողական աշխատանքներ իրականացնող բաժինների մեթոդական աջակցություն,
- իրականացնում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցեր հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում դրանց մասին տնտեսավարող սուբյեկտներին իրազեկման աշխատանքներ,
- իրականացնում է իր լիազորությունների շրջանակում բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակում այլ տեսչական մարմինների հետ՝ վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով,
- իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքներ,
- իրականացնում է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ իր իրավասության սահմաններում վերահսկողական աշխատանքներ՝ ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչներից) և (կամ) ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի կանոնների, գովազդի, իրացման (վաճառքի) խթանման արգելքի ու սահմանափակումների, ինչպես նաև օգտագործման սահմանափակումների ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջների կատարման նկատմամբ

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

- մասնակցում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտի զարգացման հայեցակարգերի ու ռազմավարությունների մշակման աշխատանքներին:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

- բարձրագույն կրթություն,
- հայերեն և ռուսերեն լեզուների իմացություն.
- համակարգչով, ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություններ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետը ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա և թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների քանի տոկոսն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

Աշխատավարձը 267.072 ՀՀ դրամ, որը համապատասխանում է քաղաքացիական ծառայողի մասնագիտական պաշտոնների 2-րդ ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցին և բազային աշխատավարձի արտադրյալին:

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107